

ՈՂԲՔ ՀԱՅԿՈՒՀԻՈՅՆ

Այն լուսին յետուստ լերինն Վարապայ
Ծիրանեփառ իբր ըզդձնոյ նաղեալ գայ .
Շուրջ ըզնովաւ բոլր սատեղաց բոլորին
Լուսադողդոջ 'ի կայթ յալիս եթերին .
Ծաղիկն հովտին ընդ իւր տարփիցն անուշտի
Զանեմահականն ըմպէ զցօղոյն մատրուուակ .
Ժամ հանդարտիկ , յոր 'ի հառաջս զեփիւռին
Բնութիւն համայն իոյտայ սիրով կենսածին :

Ուր հոգւոյս իցէ հատար տարփելի ,
Ուր սրտիս միակ իմ սէր ցանկալի . . .
Բարէ՛ յարիւն ներկան բոսոր
Աչացս աղբերք գետաշորդոր ,
Ու արտաշածիկ յիմ սիրոյն
Լուր մի չառի ես համբուռն . . . :
Ալեայ մահաբոց
Իցէ արդեօք կուր ,
Թէ փութորկաց
Խաւարաղդեաց :

Աւանդ ժամուն յոր Թող նո զոռունն հայրենի ,
Աւանդ եթող և ընդ նմին զիս այրի .
Ասաց երթալ պանդխտակցել իւր եղբարց
Եւ բնաւ անդուստ 'ի գիրկ սիրոյն չարար դարձ .
Ընդ աստեղօք օտարութեան դժընդակ
Ըզխօլ մահուն էարբ ըզդառն ըզբաժակ .
Եւ հիմ Թողի զնա երթալ միայնակ
Գէթ փակէի անձամբ զաչկուռնս գեղօրակի . . . :

Օ՛ն անդր 'ի բաց , օ՛ն աստեղք և ծաղիւնք ,
Օ՛ն անդր 'ի բաց , լոյս և խունիք անուշունք ,
Քա՛ւ ինձ երգոց ձայնք զուարթարար ,
Տրտում հոգիս է մինչ իսպառ ,
Զիարդ զուգել զմահ ընդ կեանս
Եւ զթախիձ ընդ հրճուանս :

Մի էր սրտիս յոյս
Մի իմ աչաց լոյս
Որ ելիք զիս
Յիմ առոյգ տիւս :

Աստուած իմ և ի՞նչ կարիցեմ հանդուրժել
Դառն աղէտիցս յար զմիմեամբք ել և ել .
Երկուց տասանց այն ինչ գարունք շնորհունակ
Պճնեալ ՚ի գեղ զանտիականն իմ հաստի ,
Եւ մաշեցայց անժամ ողբովք ցաւալից
Զերթ զճաղիկ յարիւնդն թառամ ճաճանջից
Այլ հիմ տուաւ լոյս ակունդեաց թշուառին
Եւ կեանք որոց սիրտք հեծեծեն տխրագին

Ա՛հ , ս՛հ լե՛ս տէր ապաստան որբոց ,
Զիմ սրտիս լե՛ս աղաղակ ողբոց . . .
Լսե՛մ , լե՛մ ես ըզսօսին
Տերեւաթափ աշնան հողմոյն ,
Որ սաւառնի շուրջ զինեւ
Իբրր զուարթնեակ լուսաթեւ ,

Արկանել ՚ի խոր
Զիս ՚ի մահուն ձոր ,
Զինչ ազազուն
Տերեւ ծառոյն

Այլ ախ՛ օն անդր ՚ի բաց խորհուրդ ցնորակոծ . . .
Կայծ իմ սրտիս Տէր կայծ մաղթեմ կենսաբոց .
Զինչ թէ մեռայց լիցի մանկիկս իմ սիրուն ,
Ո՞րտ մահուս գգուեսցէ զնա ինձ հանգոյն . . .
Ո՛վ փափկագեղ զուարթուն սյտիւք վառ ՚ի վառ ,
Նախախայրի՛ պսուղ սիրոյս խանդավառ ,
Որ աղէտիցդ անգէտ ժպտիս գեղաշնորհ ,
Ե՛կ և հանգի՛ր վերայ սրտիս իմ անդոր .

Ե՛ս խանդակաթ մայր նոյն և եղեց հայր ,
Ի քոյին սուրբ սէր կեցի՛ց ես՝ յամայր .
Եւ զիմ գորով մայրենի
Տայ քեզ սնունդ քաղցունենի :

Իցի՛ւ թէ խորշակ
Պահէր զքոյդ հաստի
Ի խաղս առուաց
Անբիծ կենաց :

Ա.-Էփիս Կարապետեան Կ. Պօլսեյի
Աշի . Ժառան . Վարժարանի :